

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

հիմնական դպրոցի ավարտական քննական աշխատանքի կառուցվածքն ու գնահատման չափանիշները

«Մաթեմատիկա» առարկայի 2011 – 2012 ուստարվա հիմնական դպրոցի ավարտական քննական աշխատանքը բաղկացած է 32 առաջադրանքներից:

1 - 18 առաջադրանքներն ընտրովի պատասխանով առաջադրանքներ են՝ նպատակաուղղված աշակերտների հենքային գիտելիքների ստուգմանը, որոնք համապատասխանում են հանրակրթական դպրոցի ծրագրով նախատեսված նվազագույն պահանջներին: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4-ական տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը: Աշակերտը պետք է ճիշտ պատասխանը վերցնի շրջանակի մեջ և «X» նշանով նշի ձևաթղթում:

19 - 29 առաջադրանքները կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են, որոնց միջոցով ստուգվում են աշակերտի ծանոթ կամ փոքր-ինչ փոփոխված իրավիճակում գիտելիքների օգտագործման կարողությունները: Կարճ պատասխան պահանջող յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում աշակերտը գրում է ճիշտ պատասխանը (անհրաժեշտության դեպքում նշելով չափման միավորը՝ օրինակ՝ 15 կգ), այնուհետև այն, առանց չափման միավորի անցկացնում ձևաթղթի համապատասխան մաս:

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանը ուղղելու երեք հնարավորություն, երկուսը՝ Ա մասում, մեկը՝ Բ մասում: Եթե որոշել եք փոխել նշված պատասխանը, ապա նոր ընտրված պատասխանը պետք է վերցնեք շրջանակի մեջ և նշեք պատասխանների ձևաթղթի «Միայն նշված պատասխանները փոխելու տեղ»-ում:

30 - 32 առաջադրանքներն ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ են, որոնց կատարումը պահանջում է մաթեմատիկայի տարբեր բաժիններից ստացած գիտելիքների կիրառում: Դրանց համար պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացվի լուծման ամբողջ ընթացքը առաջադրանքից հետո նշված տեղում:

1 - 29 առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր: Միայն պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

30 - 32 առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 2 միավոր: Գնահատման քայլը 1 միավոր է:

Զննական աշխատանքին տրվող առավելագույն միավորը 35 է: